

ունի եւ այս կերպով իտալական հասարակաց կենաց կ'ընկերակցի: — Տնտեսական մաքաւման մէջ այս ամէնը մի մի սահմաններ են՝ որք յաշորդաբար կը գրաւեն իրենց սեփական տեղը:

Nuova Antologia (16/9. 99). — Լատին լիմերիկոյ մէջ իտալական գաղթականութեան տարածումը. — Հնարիկոյ Պարոնն է յօգուածագիր, որոյ յօգուածին բովանդակութիւնն այս է. Իտալացիք ընդհանրապէս Եւրոպայի Զինացիները համարուած են, այսինքն՝ ողորմելիներ որք խեղճութեան պատճառաւ իրենց երկրէն հալածեալք կ'երթան ամէն կողմը եւ դէրագին աշխատելով կը նուազեցնեն աշխատաւորաց վարձքը եւ այսպէս իրենց կը թըշնամացընեն դամէնքը: Բայց եթէ այս ենթադրութիւնն ճշմարիտ է Գաղղիոյ, Միացեալ Նահանգաց եւ մի քանի ուրիշ աշխարհաց մէջ, սակայն կան աշխարհներ ալ մասնաւոր Արեւելիներէն է Պրագլիէ մէջ, յորս իտալացիքն ոչ է որի գործաւոր, այլ ճարտարագործ, եւ այնչափ յաջողութիւն գտած է հոն՝ որ սպանիական կամ ըւստրոստական Ամերիկան գրեթէ փոխուելու վրայ է յիտալական Ամերիկա: Երեք միլիոն իտալացիք հիմա հաստատուած են Փլաշայի եղերքը, Պրագլիէ անտառաց մէջ, ի Պուէնոս Այրոս, Սան Փաւլոյ եւ զառնալու ամենեւին միտք չունին: Ասոնցմէ շատերն, նախ ձեռագէտք եւ այլք, որք կ'աշխատեն իրենց տերանց քով, հիմա իրենք եղած են երկրատէրք, տնկողք, վաճառականք, զբաղափոխք, ճարտարագետք եւ Անգղիացացի թրանսփաւ կատարած դերը կը կատարեն հոս:



ԲԱՆԱՍԵՐ. — Նոստիսայ ցամախաւ. կամ համդէս. Գիմն է 20 ֆր. — Հասցէ՝ M. BASMADJIAN. (112. B-d. Rochecouart)

PARIS

ԲԻԻՐԱԿՆ. — Կը հրատարակէ բանասիրական, տեղագրական, ազգագրական յօդուածներ: Խմբ. Մ. Դաշթեան. — Գիմն է 12 ֆր.:

Հասցէ Direction du «Puragh» Bahtché kapou kazasker han N. 16 CONSTANTINOPLE.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄԻՍ

15 ՓԵՏՐՈՒԱՐ



ԱՆԳՂԻԱ

Անգղիոյ ԳՂԱՅԱՅ պատերազմն Պոնթոսի հետ օրըստօրէ լաւը երեւոյթ ստացաւ: Վարէն, Պելլէրի Գլէրի զօրապետք համաձայն կը պատերազմին: Եւստուարին վերջերք քիչ շատ յոյս առն Անգղիացիք երբ Սփինոս Քօփի տէրեց Վարէն, եւ Վուսկէյա Պօէր զօրավարն ծանր կերպով վիրաւորուեցաւ: Բայց այդ յոյսն ու ուրախութիւն շատ չտեսցաւ. — Վարէն քաշուեցաւ տիրած տեղերէն: — Վասպէրլէյն ինքզինքը սկսաւ պաշտպանել խօսարարին մէջ, որ լուրջ կերպով կը խորհի Լորտերու Ժողովն բարեփոխելու իրենց ներկայ վիճակն: Այսու հանգիւծ, Անգղիա Սփինիոյ մէջ ընկճուած եւ լքեալ զրից մէջ է, եւ կ'ուզէ հոն 200,000 զինուորաց բանակ մը կազմել: Տեսնենք բաղդը որ կողման պիտի նպաստէ:

ԳԱՂՂԻԱ

Գաղղիոյ ներքին վիճակն ըստ վարչութեան՝ յետին առթեմանի աղէտալի կընայ համարուի: — Վերջերս կրօնաւորաց կարգի (Assomptioniste) մը բարձումը վճեց, եւ Ժողովուրդը ու կղերը յուզեց այս դատարկիքն: — Յուշահանդիսին գործն ալ յոյժ ձախարդ կ'երթայ. նաւրակառոյց չէինքին մեծ մասն կործանեցաւ, եւ այս պատճառաւ պիտի յետաձգուի բացումը: Անգղիոյ պատերազմն Սփինիոյ մէջ եթէ զուշարունակուի, մեծ փնտս պիտի հասնի դադարական ցուցահանդիսին: — Վաւտէք Ռուսոյ ճառախօսութեան մը մէջ ծանոյց՝ թէ արդի վարչութիւնն ի հարկէ պիտի պաշտպանէ զատարապետութիւնն: Եւ վերոյշեալ կրօնաւորական կարգին բարձման առթիւ ալ նոյն վաւտէք Ռիշար Ժիրանուարին հետ թղթակցեցաւ. — այդ՝ ծանր խնդրոյ կերպարանք առաւ:

ԱՅԼԵԿԱՅԼ ՏԵՐՈՒԹԻՒՆՔ

ԱՍՍՏՐՈՆ եւ ԼՈՒԿԱՐՈՆ պաշտօնարարին մէջ խնդիրներ յուզուեցան տէրութեան հասարակաց ծախուց համար. — Կայսեր առջեւ ալ Քլարի կոմսն եւ այլ պաշտօնեայք խորհուրդ